**Արձանագրություն N 2**

**«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/9/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան 31 հունվարի 2017թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Միրզոյան, Ա.Գասպարյան, Ա.Մարտիրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Մանուչարյան

**I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| հ/հ | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | Անուշ Պետրոսյան ԱՁ | ԲԱՂՐԱՄՅԱՆ Արցախի 15 |
| 2 | Նեոսիստեմ ՍՊԸ | Երևան Դ.Մալյան 6շ բն 22 |
| 3 | Գրիգոր Այվազյան ԱՁ | ՌՍՏԱՆ Ս. ԹԵՀԼԵՐՅԱՆ Փ. 14 |
| 4 | Բեռնային ուղի ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ Մանանդյան 25 6 |
| 5 | Սեգ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ Զ. ՍԱՐԿԱՎԱԳԻ Փ 72/2 18ԲՆ |
| 6 | Այ Սերվիս ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ Հ.ՀԱԿՈԲՅԱՆ 3/14 |

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ 0:

2. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին.
-համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:
Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց

համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

4. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| N | Չափաբաժնի անվանումը | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անուշ Պետրոսյան ԱՁ | Նեոսիստեմ ՍՊԸ | Գրիգոր Այվազյան ԱՁ | Բնեռային ուղի ՍՊԸ | Սեգ ՍՊԸ | Այ Սերվիս ՍՊԸ |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| 1 | *Համակարգչի և օժանդակ սարքավորումների սպասարկման ծառայություններ* | **36500** | | | 140000 | 96500 | 137000 |
| 2 | *Տպիչ և պատճենահանող սարքերի սպասարկման ծառայություններ* | 14700 | **13500** | 14000 | 45000 | 146500 | 176500 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

5. Ընդունել ի գիտություն, որ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ են զբաղեցրել հետևյալ մասնակիցները՝ 1-ին չափաբաժնի մասով Անուշ Պետրոսյան ԱՁ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով Նեոսիստեմ ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 77-րդ և 78-րդ կետերով սահմանված ժամկետում, հայտերի գնահատման արձանագրությունը ներկայացնել

ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահաման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | ______ | Հ.Հովհաննիսյան |
| Անդամներ՝ | ______ | Ա.Գասպարյան |
| | ______ | Ա.Մարտիրոսյան |
| | ______ | Լ. Միրզոյան |
| Քարտուղար՝ | ______ | Լ.Մանուչարյան |